

**Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՀԱՆԱ ՔԵՍԱԲՅԱՆ**

*/ավազանի անունը՝ Հարություն/*

*Ծնվել է 1969 թ. օգոստոսի 29-ին Էջմիածին քաղաքում: 1976-1986 թթ. սովորել է տեղի թիվ 5 ռուսական միջնակարգ դպրոցում: 1986-1987 թթ. ծառայել է Ս. Սարգիս եկեղեցում: 1987-1992 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում: 1988-1989 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1992 թ., ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1992-1996 թթ. ծառայել է Ս. Էջմիածնի Մկրտարանում: 1996 թ. սեպտեմբերի 29-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: Այժմ պաշտոնավարում է Արմավիրի թեմի Ս. Կարապետ /գ. Արշալույս/ եկեղեցում:*